

www.mesrobian.com

Արևմտահայկազի ԿԻՄ ԿԱՐՄԱՆԱԿՈՒՄ

260504

1982

JEWELRY Design

DIAMOND Setting

WAX Molding

GEMOLOGY

HAIR STYLING

MAKE UP

Վարձատր ամբաստանի օրեր կը գծահասանի վաղաժամ վարձարժեք աստիճան

Tele-Video & Radio Repair

Car Electricity & Electronics

COMPUTER

Software & Hardware

INTERNET

Խիստ մասնագիտացված կրթական

English

For International Business

TOEFL - Cambridge University Certificate

+ 8 օտար լեզուներ

MESROBIAN

TECHNICAL COLLEGE

Յաջողություն

20 ամենայն

փորձառություն

TICKETING

IATA

Գործի Բաց Անցագիր

Ուղևոր երկրորդ մեջ

LCCIEB

Business

Մասնագիտություններ

վկայականք, Լոնդոնում

B.T.

Համալսարան

Գործ

Երկու քննություններ մեկ վկայականով

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՎԱՂԸ ԿԸ ՄԵԿՆԻ ԵՄԵՆ, ԱՊԱ ՕՍԱՆ

Նախագահ ԿՈՐ. Էմիլ Լահուտ վաղը պաշտօնական այցելությունը մը պիտի տայ Եմեն, ուրկէ ան պիտի մեկնի Օման: Կը նախատեսուի, որ նախագահ Լահուտի պաշտօնական այցելությունը արարտի Երկուշաբթի:

Նախագահութեան ընդհանուր տնօրէնութեան հրապարակած մէկ հաղորդագրութեան մէջ յիշուած է, թէ նախագահ Լահուտ իր այս այցելությունները կը կատարէ ընդառաջելով Եմենի նախագահ Ալի Ապտալա Սալէհի եւ Օմանի Քապուս Պըն Սուայտ սուլթանի հրաւերներուն:

Նախագահ Լահուտի պիտի ընկերակցի պետական եւ բարձրաստիճան պաշտօնատարներու պատուիրակութիւն մը: Պաշտօնական այցելությունները կը կատարուի Եմեն - Լիբանան եւ Օման - Լիբանան յարաբերություններու բարելաւումն ու ամրապնդումը: Կը նախատեսուի, որ Սանաայի մէջ ստորագրուին երեք համաձայնագիրներ՝ ընկերային, օդային եւ տուրքերու կրճատման վերաբերեալ մարզերու ծիրին ներս: Իսկ Օմանի մէջ պիտի կնքուին համաձայնագիրներ երկու երկիրներուն միջեւ օդային մարզի բարելաւման նպատակով:

Հանդիպումներուն ընթացքին պիտի քննարկուին նաեւ միջազգային եւ շրջանային կացութիւնը եւ անոնց հանդէպ որոշեցումներ կեցուածքները:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ երէկ Պապուայի մէջ ընդունեց Լիբանանի մէջ օտար երկիրներու ութ ղեկավարներ, որոնք նախագահին յանձնեցին իրենց հաւատարմագիրները: Անոնց կարգին էին Չուիցերիոյ, Քանադայի, Չիլիի, Չինաստանի, Չեխիոյ, Եգիպտոսի, Իրանի եւ Օմանի ղեկավարները:

Նախագահ Լահուտի այցելեց նաեւ Ֆրանսաիւս Երկիրներու Խորհուրդին մէջ իր մասնուն ներկայացուցիչը՝ Շարլ Ռոպը: Քննարկութեան Ֆրանսաիւս Երկիրներու վեհաժողովին առնչուող հարցեր:

Նշենք, որ վեհաժողովը պիտի կայանայ յառաջիկայ 18, 19, 20 Հոկտեմբերին, Լիբանանի մէջ:

ԻՍՐԱՅԷԼ ԿՈՒՂԵ ՏԻՐԱՆԱԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԶՈՒՐԵՐՈՒՆ, ԲԱՅՑ ՄԵՆԵ ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆԵՐ ԴԻՏԻ ՉՉԻՉԻՆԵ

ԸՍՄԻ ՆԵՊԻՀ ՊԵՐՐԻԻ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ Վիեննայի «Հիլթըն Փլայա» պանդոկին մէջ տուաւ մամուլային մը: Աստիճակ կատարած իր այցելությունները արդիւնքներուն, ինչպէս նաեւ Լիբանանի եւ շրջանին առնչուող հարցերուն մասին:

Մամուլային միջոցով գտնուեցան Վիեննայի մէջ գործող արաբական բոլոր լրատուական միջոցներին ներկայացուցիչներ:

Պըրրի հաւաստեց, որ Լիբանանի քաղաքական եւ սահմանակից կացութիւնը յաւ վիճակի մէջ կը գտնուի, բացառելով անշուշտ իտալի կողմէ ստորագրուող սահմանային խախտումներն ու թոյլ տրուած հարստի վերել:

Անդրադառնալով տնտեսական կացութեան, Պըրրի կայն որակեց վտանգաւոր եւ անհրաժեշտ նկատեց բոլոր ճիգերը ի գործ դնել լուծելու համար տնտեսական տագնապը, որ կը կարօտի երկար ժամանակի հասնելու համար վերջնական լուծում, «որովհետեւ արաբական երկիրներու կողմէ խոստացուած օժանդակությունները չհասան, բացի Սեուտական Արաբիայէն, Քուեյթէն եւ Արաբական Միացեալ Էմիրություններէն, եւ անշուշտ ընթացքի մէջ եղող Տրանսայի ճիգերէն»:

«Փարիզ - 2» խորհրդածրոյրը կայացնելու իմաստով, ըսաւ Պըրրի, մաղթելով, որ «Փարիզ 2» առիթը մը կ'ըլլայ անտուայն «թեթեւեղելու» կուտակուած պարտքերու հարցը: Պըրրի նշեց նաեւ, որ կտա վարտություն իր կարելին կ'ընէ կրճատելու պետական պարտքը եւ խորհրդարանը կը դարձնուի կառավարութեան՝ ապապետականացման ծրագրին իր աշխատանքին մէջ:

Պըրրի նկատել տուաւ, որ Միացեալ Նահանգներ - Լիբանան յարաբերությունները վատ վիճակի մէջ չեն գտնուիր, անելցնելով, որ նոյնիկ ջանքեր կը թափուին, որ Լիբանան - Սուրիա - Մ. Նահանգներ գործակցին ահաբեկությունները անշուշտ, «Սակայն երբ հարցը կայտարարուի Իսրայէլի» ամբողջ արաբական աշխարհը կը դառնայ սեւ աչք մը, իսկ Իսրայէլ՝ ամբողջ կացութեան աչքին յոյսը, եւ ճիշդ այս կէտին մէջ կը կայանայ հարցը: Հետեւաբար Մ. Նահանգներու հետ յարաբերությունը լաւ է, բացի երբ անիկա առնչուած է Իսրայէլի», ըսաւ Պըրրի:

Ուսկիւնի շուրջը Խորհրդարանի անդրադառնալով Պըրրի յատկացուց, որ հարցը կը մնայ անապակի եւ գողութեան ենթարկուած անձի մը յարաբերութեան: «Իսրայէլ կ'ուզէ տիրանալ Լիբանանի շուրջը եւ կը փորձէ շրջանային եւ միջազգային կացութիւնը օգտագործել մեկի պարտադրելու կամ արգիլելու, որ մեր շուրջը չկայ ինք. սակայն մենք կը տեսնենք, որ յարմար առիթի մը առջեւ կը գտնուիք Ուսկիւնի շուրջը մեր իրաւունքը ամբողջութեամբ առնելու», ըսաւ ան:

Իրաքի ներկայ իրավիճակին անդրադառնալով, Պըրրի յայտնեց, որ կացութիւնը վտանգաւոր է եւ կուտ իրաքեան հարցը լլայլէ անելի է:

Պէտք է ապաւինել վերադառնալ ՄԱԿի որոշումներուն եւ ոչ՝ Մ. Նահանգներու կողմէ որոշումներուն:

ԿՈՒՂՈՒՄ

● Հաստատութիւն մը կարիքը ունի 20էն 26 տարեկան երիտասարդ պաշտօնեաներու. պայման է երկրորդական վկայական եւ անգլերէն ու արաբերէն լեզուներու լաւ իմացությունը: Հեռ. 01-502329 (Միւս էլ Ֆիլ):

ԵԱՆՈՒ ԿԱՍ ԿԱՐՁՈՒ ԵՆ

● Բնակարաններ եւ խառնուրդ Պուրճ Համուտի Արագածի շրջանի մէջ: Հեռ. 03-692872:

ԿՈՒՂՈՒՄ

● Ոսկերչատուն մը կարիքը ունի գիրքոն քար գամող գործաւորներու: Հեռ. 01-890951:

ԿՈՒՂՈՒՄ

● Հաստատութիւն մը կարիքը ունի ցուցադրարար հին մէջ վաճառող օրինորդի մը՝ ուսման միջնակարգ մակարդակով, Պուրճ Համուտի շրջանէ: Դիմել՝ հեռ. 01 - 258081:

ՄԱՀԱԶԴ

Տիրաւոր Ռաշիկ Ղուկասեան եւ զաւակը՝ Սարգիս Տէր եւ տիկին Գրիգոր Ղուկասեան եւ զաւակը՝ Բաֆֆի

Տէր եւ տիկին Շարպէլ Գուրգուրի եւ զաւակը՝ Ժողէֆ Տէր եւ տիկին Արա Եսայեան եւ զաւակը՝ Եանթ Էմիլեան ընտանիք

Կէնճեան ընտանիք

Չէքմէեան ընտանիք

Կիւզէեան ընտանիք

Ճուհարեան ընտանիք

Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, քրոջ եւ հարազատին՝

ՄԱԵՐՈՒՇԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ

Մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 26 Սեպտեմբեր 2002ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 27 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Մար իլիաս Եկեղեցւոյ մէջ, Համ-մանա:

● Ներկայս ընդունելի իբրեւ մահազոյ:

● Ցաւակցութիւնները կ'ընդունուին Եկեղեցւոյ սրահը եւ հանգուցեալին բնակարանը, Շաբաթ 28 եւ Կիրակի 29 Սեպտեմբերին:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Գէորգ Կիւզէեան եւ զաւակուը Տիկին Նազելի Կիւզէեան

Տէր եւ տիկին Բաբգէն Ճուրեան եւ զաւակուը Տիկին Էմմիլի Պէրպէրեան

Տէր եւ տիկին Երուանդ Գուլումեան եւ զաւակուը եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր եւ հարազատին՝

ՈՎՍԱՆՆԱ ԿԻՒԶԷԼԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 26 Սեպտեմբեր 2002ի երեկոյեան, իր բնակարանին մէջ:

Յուշարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 27 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայս ընդունելի իբրեւ մահազոյ:

● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Ուրբաթ 27, Շաբաթ 28 եւ Կիրակի 29 Սեպտեմբերին:

ՄԵԻԹԱՐԵԱՆ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ԿԱՐԺԱՐԱՆ - ՊԻՔՅԱՅԱ

2002 - 2003 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են:

Վարժարանս կ'ընդունի նախակրթարան աստիճանի աշակերտներ 7րդ դասարանէն սկսեալ:

Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնուրուի թուղթի լուսապատճեն, 2 լուսանկար եւ վիճակագրոյց:

Արձանագրութեան համար դիմել վարժարանի տնօրէնութեան՝ հեռ. 04-981077 եւ 03-753313:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՀԱԼԷՊ **ՀԱԼԷՊ**

ՀԱՌԻՐԸՑ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ

Յատուկ դասընթացներ, երեկոյեան ժամերուն, աշխատող երիտասարդներու համար:

Արձանագրութեան համար դիմել

Շ. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ԴԱՐՍԱՆՏՈՒՆ, ՇԱԼԷԱ:

Հեռահայն՝ 4645202:

ԸԱՆԴԻՍԱՒՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՈՒՐՅԱՅԻ ԸԵՐՈՍԱՄԱՐՏԻ ԸՈԳԵՆԱԳԻՍ

Կիրակի, 29 Սեպտեմբեր 2002ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի հանդիսաւոր Ս. պատարագ:

Արարողութեան պիտի նախագահէ եւ քարոզէ՝ **ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ** (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Յաւարտ Ս. պատարագի պիտի կատարուի Ուրբաթի հերոսամարտին 87րդ ամեակին առիթով հոգեհանգստեան պաշտօնական արարողութիւն:

ԹԱՂԱՎԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՏՈՒՅ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● **ԶՐՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ** նախարար Քարամ Քարամ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Բրիտանիոյ ղեկավար Ռիչարտ Քիչընը, որուն հետ քննարկեց Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութեան նախագահի պաշտօնին Քարամի թեկնածութիւնը, որ առաջարկուեցաւ իբրանեան կառավարութեան կողմէ:

● **ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ** Նասրալլա Սֆէյր պատրիարքը երէկ Պեքրէի մէջ ընդունեց երեսփոխան Նեպիլ Լահուտը, որ հաւաստեց, թէ ինք դեմ է ամերիկեան Քոնցրէսին առջեւ Սուրիոյ հաշտեցումներէն ծրագրին, համաձայն է Լիբանանի դատական իշխանութեան, եթէ անոր նպատակն է արշաւ մը ուղղել Լիբանանի մէջ Իսրայէլի գործակալներուն դեմ, իսկ եթէ այս վերջինը պատեհաբար կը կրործեն ընդդիմադրութիւնն ու քաղաքական տարբեր կեցածքները ճեղքել կամ տկարացնել, մեր կողմէ երբեք ընդունելի չէ այդ քայլը:

● **ԼԻԲԱՆԱՆԵԱՆ Ժողովրդավարութեան կուսակցութեան** նախագահ նախարար Թալալ Արսլան երէկ կոչ ուղղեց ընդդիմադրութեան՝ հետեւ մնալու ծաշ-րայեղականութեան, դիտել տալով, որ Սուրիան հաշտեցում մէկ «ստեղծագործութիւն» է: Նշենք, որ երէկ 250 նոր երդուեալներ միացան Արսլանի ղեկավարած կուսակցութեան շարքերուն:

● **ՏՈՒՌԻՅԻՅՐ** շրջանին մէջ երկէ բարձրաստիճան պաշտօնատարներու եւ կուսակցութեանց ներկայացուցիչներու զօրակցութեամբ տեղի ունեցաւ բողոքի ցոյց մը ելեկտրակայաններու երեսփոխան Գեմալ Գալապի մը ստացագիրներու երեսփոխան Գեմալ Գալապի մը ստացագիրները, որոնք կը պարունակեն երեսակայական գումարներ, եւ 10 օրուան պայմանագրով կուտան վճարումը կատարելու:

● **ԼՍԱՏԵՈՂԱԿԱՆ** Տեղեկատուութեան Ազգային Խորհուրդի նախագահ Ապտէլ Հատի Մահմուդ երէկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ յատկացուց, թէ կարգ մը օրաթերթերու լույս ընծայած լուրեր, թէ վարչապետ Ռաֆիք Հարիրի պահանջած է պատկերասփիւռի «Էլ. Պի. Սի.» կայանը պատժի ենթարկել Այն Շայխի ծանուցումին եւ Շարլ Այ-յուպի յայտարարութիւններուն համար, անձիզ է, որովհետեւ խորհուրդին նման հարց չէ ներկայացուած ոչ վարչապետ Հարիրին, ոչ ալ այլ անհատ:

● **ԴԱՏԱԿԱՆ** իշխանութեան գերագոյն խորհուրդը երէկ երեկոյեան խորհուրդի նախագահ Պապուս Նասրի Լահուտի գլխաւորութեամբ գումարեց ժողով մը, որուն ընթացքին կատարուեցան առաջարկներ դատական իշխանութեան մէջ պաշտօնեաներու նշանակումներուն գծով:

Խորհուրդը միաձայնութեամբ վաւերացուց առաջարկները, զանոնք կարգ մը փոփոխութիւններու ենթարկելի ենք. որոշումները փոխանցուեցան արդարապատեան նախարար Մամիր ժուրի:

● **ԸՆԴՀԱՆՈՒՐ** գաղափարագ Ատանայի Ատանայի գիշեր նախարարաց խորհուրդի ղեկավար ուղղեց երկրորդ դիմը, որուն մէջ պահանջեց «Փուժա» ուղղաթիւներու թղթարար:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՒԿ

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը կը յայտարարէ, որ Նշան Փալանճեան ձեմարանի ուսանողական գիշերօթիկ բաժնին մէջ մնացած են սահմանափակ թիւով սենեակներ, որոնք տրամադրելի են ուսանողներու:

Փափաքողները կը խնդրեն կապ հաստատել հետեւեալ թիւերուն եւ կամ անմաք ենթակայանալ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ, Նշան Փալանճեան ձեմարան:

Հեռահայնի թիւեր՝ 01 - 372455, 01 - 375409
01 - 03 - 549917
E - mail Hamazac@cyberia.net.lb

Դպրոցական Դասագիրքեր

*Հայերէն *Անգլերէն
*Արաբերէն *Ֆրանսերէն
*Բառարաններ եւ գարգացումի գիրքեր

Գրատուն ՈՍԿԵՂԱՐԻ մօտ

Library VOSKETAR

National textbooks, all kinds of schoolbooks & dictionaries

Պուրճ Համուտ, Սուրբ Փրկիչ Եկեղեցւոյ կից Հեռ. 01/264750

PHOTO NERSES

ԱՐԱԳ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱԿԱՒՈՐ ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐ

20ի ուրախ առիթներու լուսանկարները տպուելու համար ԱՐԴԻԿԱԼ DIGITAL մեքենայի միջոցով, որպէսզ Եւ զանազան չափերով Ստանձնու՝ 20 վայրկեանէն:

Լուսանկարները կ'արձանագրուին CD-ի կամ FLOPPY տիպի մը վրայ

Cameraներու ձև հաւաքածոյ պակտներ ու Օկարի շրջանակներու ձևերու տեսակարի

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիշերով:

Պուրճ Համուտ, Զարապետարանի փողոց, «Սամբըր Արի» դիմաց, Հեռ. 01-261858 եւ 01-255992

ԱՐՑԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԿԱՊՈՅՏ ԽԱՉԸ ՀՈՎԱՆԱԻՈՐ ՀՕՄԻՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻՆ

ՀՕՄԻ Կեդրոնական վարչութեան նախագահութեամբ 1998-ին ի վեր Արցախի տարբեր շրջաններուն մէջ կը բացուին մանկապարտեզներ (մեր հասկացողութեամբ՝ մանկամտուր), ուր կը յաճախեն այդ շրջաններու հարիւրաւոր երեխաներ: Այս մանկապարտեզները կը հովանաւորուին տարբեր երկիրներու մէջ գոյութիւն ունեցող ՀՕՄԻ միաւորներու (Կիպրոս, Քանադա, Միացեալ Նահանգներ եւ այլն), ինչպէս նաեւ այլ միութիւններու կամ անհատներու կողմէ, որոնք իրենց յատկացումներով եւ ցուցաբերած հետաքրքրութեամբ, կը «խնամակալեն» այդ մանկապարտեզները՝ մեծ բարիք կատարելով շրջանի անչափահաս եւ նախադպրոցական տարիքի մէջ գտնուող երեխաներուն:

Նախանցեալ տարիներուն, Յունաստանի Հայ Կապոյտ Խաչը կ'որոշէր հովանաւորել Արցախի մէջ ծրարելիք մը: Եւ Կեդրոնական վարչութեան հետ համախորհուրդ, յարմար կը նկատուէր եւ կ'որոշուէր, որ Հայ Կապոյտ Խաչը եւս հովանաւորէ մանկապարտեզ մը, այս ձեւով օգնութեան ձեռք երկարելով Արցախի փոքրեւորներուն:

Դարձեալ ՀՕՄԻ Կեդրոնական

«Կ'ուզէի համբուրել ձեր աջը, որպէսզի համբուրած ըլլամ աջը այն բոլոր հայուհիներուն, որոնք այս գործին ետին են, եւ որոնց ջանքերուն շնորհիւ այսօր մեր գիւղը օժտուեցաւ այս մանկապարտեզով»:

Իր գոհունակութիւնը այսպէս կ'արտայայտէ յուզուած եւ արցունքոտ աչքերով մեծ մայր մը, որուն երկու թոռնիկները երկուսնաբար իրուրնէ արդէն սկսած են յաճախել Յունաստանի Հայ Կապոյտ Խաչին կողմէ հովանաւորուող մանկապարտեզը:

Խորապէս յուզուած տիկին Անահիտի այս խօսքերէն կը փաթթուի իրեն եւ այդ ձեւով կը փոխանցեմ ուրախութիւնն ու երջանկութիւնը Հ. Կ. Խաչի եւ ընդհանրապէս ՀՕՄԻ մեծ ընտանիքին պատկանող բազմաթիւ ընկերուհիներուն, որոնք այդ պահուն, եթէ հոն ըլլալին, վստահաբար պիտի չկարենային զսպել իրենց արցունքները:



Փոքրերու յարմարաւետ ննջարանը

ըր՝ ի տես այն ուրախութեան եւ գոհունակութեան, որ կ'արտացոլար Տող գիւղի բնակիչներու զէմբերուն վրայ:

Այդ ու հացով ու ծաղկեփունջերով զիմաւորուեցան եւ ջերմ ընդունելութեան արժանացան բացման հանդիսութեան ներկայ հիւրերը: Հ. Կ. Խաչի երկու ներկայացուցիչ ընկերուհիներու կողմէն էին ՀՕՄԻ Կեդրոնական վարչութեան գործաւարը, Արցախի պատասխանատու մարմիններու ներկայացուցիչներ: Այս առիթով բացման խօսքը կատարեց եւ հանդիսութիւնը վառեց գիւղի միջնակարգ վարժարանի տնօրէնը, խօսք առին եւ մանկա-

վարչութեան նախագահութեամբ եւ Հայաստանի Հանրապետութեան նախագահի հովանաւորութեամբ, Չորեքշաբթի 18 Սեպտեմբերին ճշուեցաւ Որբերու Խնամակալութեան Ծրագրի 10ամեակը: Այս առիթով, Սփիւռքի տարբեր շրջաններէն երեւան ժամանեցին մեծ թիւով խնամակալներ, ներկայ ըլլալու 10ամեակի մեծ հանդիսութեան ինչպէս նաեւ ծանօթանալու եւ մօտեցնելու իրենց խնամակալած փոքրերուն:

Այս գոյգ առիթներով Յունաստանի Հայ Կապոյտ Խաչի Ծրագրային վարչութեան երկու ընկերուհիներ՝ Մանուշակ Յուրախ-Սլտրեան եւ Էվա Պերպիտեան մեկնեցան Հայաստան եւ ներկայ եղան ՀՕՄԻ մանկապարտեզի բացման եւ Որբերու Խնամակալութեան Ծրագրի 10ամեակի հանդիսութեան:

Ստորեւ Յունաստանի մեր պաշտօնակից «Ազատ Օր»-էն կ'արտատպենք տպաւորութիւններ Կիրակի 15 Սեպտեմբերին տեղի ունեցած Տողի մէջ կառուցուած մանկապարտեզի բացումէն, ինչպէս նաեւ հակիրճ եւ ընդհանուր տեղեկութիւններ ՀՕՄԻ «Սօսէ» մանկապարտեզներու գործունեութեան շուրջ:



Բացումն տեսարան մը

պարտեզի անհրաժեշտութեան եւ զերին անդրադարձան ՀՕՄԻ Արցախի Ծրջանային վարչութեան ատենապետուհին, Հ. Յ. Գ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը որ նաեւ Ազգային Ժողովի պատգամաւոր է, ուսուցիչներու մաւր է, ընկերուհիներու կողմէ եղան շնորհակալական արտայայտութիւններ: Բացման հանդիսութեան ներկայ էին եւ Յունաստանի գաղութիւնն ու Հ. Կ. Խաչի գործունէութեան շուրջ հարցադրոյց ունեցողները:

Շնորհակալական, շնորհակալական խօսքեր, մանուկներու ուրախ կանչեր, ու այս բոլորի ընթացքին այցելութիւն՝ նորարաց մանկապարտեզը, անոր դասարանները, խոհանոցը, ննջարանները, ուր կը տիրէ մաքուրութիւնն ու կոկիկութիւնն: Մեր մաղթանքն է, որ յառաջիկային եւս, Արցախի բազմաթիւ այն գիւղերը, որոնք չունին մանկապարտեզներ, եւ ուր նախադպրոցական տարիքի երեխաները տեղ չունին թիմակալութեան օժտուրի մանկապարտեզներով, ուր մանուկներու ուրախ կանչն ու երգերը զիրենք այլեւս դուրս թերեւ պատերազմի, աւերածութեան

Է. ՊԵՐՊԵՐԵԱՆ
«Ազատ Օր»
Շարք՝ էջ 10

ԴԺԳՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՍՊԱՆԵՐՈՒ ՎԱՐՔՈՒԲԱՐՔԷՆ

Ջաւախքի հայութեան մօտ դժգոհութեան ալիք մը բարձրացած է վերջերս, Հայաստան-Ջաւախք սահմանին Հայաստանի մաքսային սպասարկութեան Բաւրաջի կայանին մօտ տեղադրուած հայկական սահմանապահ ուժերու սպաներու վարքուբարքին պատճառով:

Արդարեւ, սահմանապահ սպաները Հայաստանէն Ջաւախք եւ այնտեղէն Հայաստան երթեկեկող ջաւախքահայերէն գումարներ կը պահանջեն:

Եթէ որոշ պարագաներու գումարներու գանձումը կը կատարուի անցագիր չունենալու պատճառով (որուն համար Վրաստանի համապատասխան մարմինները մօտաւորապէս 100 տոլար կը պահանջեն), որոշ պարագաներու սակայն, գանձումները ամբողջը կը կատարուի քմահաճօրէն կը կատարուին՝ երբեմն բացայայտօրէն ոգելից ըմպելի գնելու համար: Այս սահմանային կէտին վրայ ծառայող սպաները յաճախ կը գինովանան գիշերները:

Միւս կողմէ, Հայաստան-Վրաստան սահմանի Նիւնոմիինայի վրացական մաքսակէտի տնօրէն Մելս Բոյճեան պաշտօնազրկուած է եւ իր տեղ նշանակուած է Ախալքալաքի շրջանային վարչութեան նախկին նախագահ Սերեժա Դարբինեան:

ԱԻՄԸ ԱՆԱԿՆԿԱԼ ՊԱՏՐԱՍՏԵՐ Է ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՈՒՆ

Ազգային ենթոքոնջման Միութիւնը (ԱԻՄ) պիտի չպաշտպանէ գործող նախագահ Ռուպէրթ Քոչարեանը, որ իր կողմէ խոստացուած սահմանազրկական բարեփոխումները չիրականացուցած, յայտարարեց ԱԻՄ նախագահ Պարոյր Հայրիկեան 18 Սեպտեմբերին, կապանի մէջ: Ան միաժամանակ նշեց, որ ԱԻՄը անակընկալ մը պատրաստած է, որուն մասին պիտի խօսի նախագահական ընտրութիւններու նախօրեակին: Պ. Հայրիկեան հերքեց ԱԻՄի պառակտման լուրը՝ նշելով, որ կուսակցութեան հեռացած են միայն «մարդկային փառասիրութիւն եւ ընչաքաղցութիւն սիրող քանի մը պատահապատշաճ, գաղափարագործ պահալիչներ»:

«ՀԱՅՈՒՍԿԱԶԱՐԴ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏ

Երեւանի մէջ տեղի ունեցած է «Հայուսկազարդ» ընկերութեան տնօրէններու խորհուրդին ընթացիկ նիստը, որուն մասնակցած է նաեւ «Կազմարդ» վարչութեան նախագահ տեղակալ Ալեքսանդր Ռեազանով: Նիստը քննարկած է ընկերութեան այս տարւան առաջին կիսամեակի ֆինանսական -տնտեսական գործունէութիւնը, կազմատնակարարման արդիւնքները, հաւաքագրումները եւ պարտքերու հետ կապուած հարցերը: Տնօրէններու խորհուրդին ներկայացուած է նաեւ այս տարուան կազմատնակարարման վերականգնման ծրագիրը իրականացման ընթացքը եւ Հայաստանի մէջ կազմ սպառման շուկային ընդլայնման հեռանկարները:

Տնօրէններու խորհուրդը գնահատած է սպառած բնական կազմի դիմաց հաւաքագրումներու բարձր ցուցանիշը՝ 126 առ հարիւր, ինչ որ կը նշանակէ, թէ այս տարուան ընթացիկ վճարումներէն անկախ, նախկին կուսակուած պարտքերը փակուած են: Տնօրէններու խորհուրդին անդամները անդրադարձած են նաեւ «Հայուսկազարդ»-ի գործունէութեան մէջ տեղ գտած հարցերուն, մասնաւորապէս բնական կազմի սպառման նուազման հարցին հարցը լուծելու եւ արդիւնաւէտութիւնն ապահովելու նպատակով «Հայուսկազարդ»-ի կողմէ վարչութեան յառաջիկայ նիստին եւ տնօրէններու խորհուրդին պիտի ներկայացուի զարգացման ծրագիր մը՝ վնասները վերացնելու եւ նիւթական շահ ապահովելու առաջարկով: Ալեքսանդր Ռեազանով նշած է, որ երկրին ղեկավարութիւնը պատրաստ է օգնելու ընկերութեան՝ ծրագիրներու իրականացման համար:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԵՑԱԻ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հինգշաբթի, 19 Սեպտեմբերին Երեւանի մէջ պաշտօնական բացումը կատարուեցաւ Լրատուամիջոցներու Կովկասեան Հիմնարկին, որ Հիմնադրուած էր այս տարուան Ապրիլին եւ կարգ մը նախաձեռնութիւններ իրագործած՝ կազմակերպելով լրագրողական դասընթացներ, քննարկումներ եւ լրատուական միջոցները յուզող համաժողովներ:

Հիմնարկի տնօրէն Վիգէն Չեթեքեան իր խօսքին մէջ նշեց, թէ «Հարաւային Կովկասի մէջ գանդուածային լրատուական միջոցներու զարգացման նպատակով՝ մենք կը փորձենք բարձրացնել լրագրութեան մակարդակը, որպէսզի կովկասեան լրատուամիջոցները դառնան հասարակական առողջ բանավէճի եւ ճշգրիտ լրատուութեան զխաւոր երաշխաւորները»: Մանրամասնելով Հիմնարկի գործունէութիւնը Վ. Չեթեքեան դիտել տուաւ, որ ծրագրած են լրահարցողական ճիշդ պատրաստութեան, վերլուծական նիւթերու ներկայացման, լրագրութեան տեսակներու վերաբերեալ դասընթացներ եւ այլ մասնագիտական ծրագիրներ:

Յայտնենք, որ նորարաց Հիմնարկը ունի մասնագիտական գրականութիւն, թերթերու եւ լրագիրներու առաջին, կը հովանաւորուի Գործակալութեան եւ զարգացման գույնգործակալութեան կողմէ եւ ներկայացուցիչներ ունի Պաքոսի, Մոսկուայի եւ Թիֆլիսի մէջ:

ՀԱՅԱՊԵՏ Մ. Փ. ՍԱԼԷ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐՈՒԹԵԱՆ»Ը ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

«ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ» ԵՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵԿԱՏՐՈՒՄ

Յրանսացի անուանի հայագէտ, Յրանսայի Ակադեմիայի եւ Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի անդամ, Հայաստան-Յրանսա ընկերութեան պատուաւոր անդամ Ժան Փիեռ Մահէ, որ նշանաւոր է իբրեւ Մովսէս Խորենացիի եւ Գրիգոր Նաւեկացիի թարգմանիչ, 18 Սեպտեմբերին Արտասահմանեան երկիրներու հետ մշակութային կապի եւ համագործակցութեան հայկական ընկերութեան մէջ ներկայացուց Նարեկացիի եւ անոր «Մատեան Ողբերգութեան» գործին նուերուած դասախօսութիւն:

Խօսելով նշեալ գործի թարգմանական իր աշխատանքին մասին (1980-1985), հայագէտը մաքուր հայերէնով եւ առանց գրաւոր պատրաստուածութեան ըսաւ, որ Նարեկացի թարգմանելու համար մարդ պէտք է շատ քաջ ըլլայ եւ կամ շատ խենթ, խենթ՝ Բաֆֆիի ներկայացուցած «խենթ» տիպարին պէս: Նարեկացին ոչ միայն հայ մեծագոյն բանաստեղծն է, այլեւ կը հանդիսանայ համաշխարհային գրականութեան զագաթներէն մէկը: Եւ եթէ աշխարհ մինչեւ այսօր ծանօթ չէ անոր, պատճառը հայերէնով գրուած ըլլալն է: Եթէ Նարեկացի գրած ըլլար Ֆրանսերէն, լատիներէն, անգլերէն, գերմաներէն կամ ռուսերէն, վստահաբար ամբողջ աշխարհը կը տեղեկանար, որ Նարեկացին այս աշխարհի ամէնէն մեծ գրողներէն մէկն է: Լեզուին պատճառով է նաեւ, որ գործը մնաց միայն հայ ժողովուրդին մատչելի եւ պէտք եղաւ երկար սպասել, որպէսզի հայագէտ թարգմանիչներ Նարեկացիի մեծութիւնը նկատեն:

Հայաստան-Յրանսա ընկերութեան նախագահ Մովսէս Չալոյեան իր կարգին ողջունեց Ժան Փիեռ Մահէի կատարած հայտնուէր գործը, պատմեց, որ 90ական թուականներու սկիզբները, երբ Հայաստան շատ ցուրտ եւ մութ էր, Ֆրանսացի գիտնականը եռանդով եւ ուրախութեամբ ոչ միայն մասնակցեցաւ Հայաստանի մէջ Ռուբէն Մահակեանի կազմակերպած գիտաժողովներուն, այլեւ գրեց գիտաժողովներէն մէկուն նիւթերուն հրատարակութեան առաջաբանը:

Այնուհետեւ Հայաստանի Գրողների միութեան նախագահ Լեւոն Անանեան ներկայացուց Հայաստանի նախագահի հրամանագիրը, որ «Մովսէս Խորենացի» շքանշանով կը պատուէ Ֆրանսացի երախտաշատ հայագէտ Ժան Փիեռ Մահէն:

ԿՐՕՆԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳՈՒՄԱՐԵՑ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

18 Սեպտեմբերին իր առաջին նիստը գումարեց Հայաստանի վարչապետին առընթեր կրօնի հարցերով խորհուրդը, նախագահութեամբ վարչապետ Անդրանիկ Մարգարեանի:

Առաջին նիստին, խորհուրդը քննարկեց կազմակերպական հարցեր: Ա. Մարգարեան անդրադարձաւ եկեղեցի-պետութիւն յարաբերութիւններուն եւ խորհուրդի կանոնադրական խնդիրներու լուծման մէջ անոնցմէ իւրաքանչիւրին դերակատարութեան մասին: Խորհուրդի անդամները ողջունեցին նման մարմինի մը ստեղծումը եւ ընդգծեցին խորհուրդի աշխատանքներուն կարեւորութիւնը պետութեան եւ եկեղեցիին համար: Անդամները արտայայտուեցան նաեւ խորհուրդի հետագայ ծրագիրներուն եւ աշխատանքներուն մասին:

ՃԱՆԱՊԱՐԿԱԾԻՆԱԿԱՆ ԱՅԽԱՏԱՆՔԵՐ

«ԼԻՆՍԻ» ՀԻՄՆԱՐԿԸ Կ'ՕԺԱՆԴԱԿԷ

«Լինսի» հիմնադրամին յատկացուցած 57,5 միլիոն տոլարի միջոցներով մինչեւ 1 Նոյեմբեր պիտի վերանորոգուին Հայաստանի շուրջ 600 քիլոմետր միջպետական մայրուղիները, որոնցմէ մօտ 300 քիլոմետրին վերանորոգման աշխատանքները արդէն աւարտած են: Աւարտին կը մօտենան նաեւ Վանաձոր - Դիլիջան 36 քիլոմետրոց ճամբուն վերջին 7,8 եւ 7,5 քիլոմետր երկարութեամբ հատուածներու վերանորոգման աշխատանքները:

Հիմնադրամին «ճանապարհաշինութիւն» ծրագրի իրականացման պետական հիմնարկի գլխաւոր մասնագէտ Մկրտիչ Վահանեանի տուեալներով, այդ հատուածներուն արժէքը համապատասխանաբար 409 միլիոն եւ 504 միլիոն դրամ է, իսկ արդէն շահագործման յանձնուած երկու հատուածներուն հետ միասին Ապարանի ենթաշրջանի շարք մը գիւղեր շրջանցող մարզով ճամբուն արժէքը 2 միլիոն 371 միլիոն դրամ է:

Հարսանեկան Քարտերու Անի Հարսանեկան

Հարսանեկան Կեդրոն - Գ. Համառ 26ա: Օ1-253008

Նորուարը՝ Մարտիի ՊԻՄ Յանտրեան

ԱՆՄՈՒԱՆԱԼԻՆ՝ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐՈՒ ՀԱՅԵՑԱԿԷՏՈՎ

«ՏԸ ՆԻԻ ԵՈՐԵ ԹԱՅԱԶ» ԿԸ ՆԿԱՐԱԳՐԵ ՆԻԻ ԵՈՐԵԻ ՄԵՋ ԿԱՅԱՅՈՂ ԱՅԼ ՑՈՒՑԱԿԱՆԴԵՍԵՐԸ, ՈՐՈՆՔ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՀԱԿԱԶՊԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ 11Ի ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ: ԿԸ ԹՈՒԻ, ԹԵ ԱՌԱԲԵԼԱԲԱՐ ԼՈՒՄԱՆԿԱՐԻՉՆԵՐԸ, ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԵՒ ՁԵՌԱՅԻՆ ԱՃԽԱՍԱՆՔԻ ՍԻՐԱՀԱՐՆԵՐԸ ԿԱՐՈՂԱՑԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ՊՐԻՄԱԿԵՆ ԱՆՁՆԵԼ ԱՂԵՏԸ

Աշխարհի Առեւտուրի կեդրոնին եւ ֆենթա-կոնին վրայ յարձակումներուն յաջորդող օրերուն ումանք ցաւ յայտնեցին, թէ արուեստը մակերեսային կամ անիմաստ էր նման սարսափելի իրադարձութիւններու դիմաց: Սակայն ոչ ոք հրաժարեցաւ արուեստի մէջ միութարուութիւն փնտնելէ կամ ստեղծագործելէ:

Նոյնիսկ, երբ տակաւին ներկայ էին այն նախաստեղծութիւնները, թէ հեզանքը պիտի կորսուէր, նիւթապաշտութիւնը վերջ պիտի գտնէր եւ պատկերասփիւռը աւելի լուրջ պիտի դառնար, արուեստը «անիմաստ» տեսնելու հայեցակէտը նահանջեց տեսողական բազմաճիւղ եւ գեղագիտական մղումով ստեղծագործութեան դիմաց: Շատ յաճախ գործածեցաւ «յարմարիլ» բառը, սակայն անիկա նաեւ շատ իրական բացատրութիւն մըն էր: Մարդիկ կարիքը կը զգային դիտելու բաներ, որոնք կ'արտացոլացնէին իրենց կորուստը, եւ յաճախ իրենք ստեղծեցին զանոնք:

Յարձակումներէն ձՅ ժամ ետք կարեկցանքի տրամադրութենէ մղուած ժողովրդային արուեստի կենսունակ ձեւ մը ծնունդ առաւ կամ նոր եւ ուշագրաւ ծայրայեղութիւններու հասաւ Նիւ Եորքի փողոցներուն եզրին յայտնուած փոքր սրբարաններուն մէջ: Վիտեօերիզներու եւ լուսանկարներու ցուցադրութիւնները բազմազան եւ ընդգրկեցին մեծ մասամբ սիրողական արուեստագէտներու գործերը: Ամէնէն յիշատակելին «Ահա հոս է Նիւ Եորքը» վերնագիրով ցուցահանդէսն էր Փրինս Սթրիթի վրայ, Սոհոյի դիմաց: Այնուհետեւ մարդիկ սկսան ծրագրել յիշատակել եւ աղէտին յաջորդող ցնցումը պատկերող արուեստի ձեւերակներ: Արուեստագէտներ վերադարձան իրենց արուեստանոցները, երբեմն աշխատելով առանց ելեկտրականութեան, բարձր շէնքերու մէջ, որոնք ժամանակին աշտարակներուն շուքին կը գտնուէին:

Յարձակումներէն մէկ տարի ետք ցուցահանդէսներ եւ ժապաւէններու ցուցադրութիւններ կազմակերպուած են թանգարաններու եւ գրադարաններու մէջ, ինչպէս նաեւ՝ շէնքերու մուտքին: Շատերը կը ցուցադրեն յարձակումներուն իբրեւ հակազդեցութիւն ծնունդ առած կամ անոնց յիշատակին նուիրուած արուեստի նմուշներ, զորս ստեղծագործած են մանուկներ, ձեռագիր աշխատանքի սիրահարներ, լուսանկարիչներ եւ լիւթամ իբրեւ արուեստագէտ աշխատողներ:

Եթէ այս ցուցահանդէսները որակի ամբողջութիւն մը կազմեն, ապա զգացական կամ գեղագիտական միութարուութիւն եւ պայծառութիւն կարելի է գտնել զանոնք մէջ: Անոնք նաեւ կը հաստատեն, թէ տեսողական արտայայտութեան մղումը խոր արժանիք ունի մարդկային բնութեան մէջ:

Ոգեկոչումի տեսողական արտայայտութիւնները տարբեր ձեւեր կը ստանան, սակայն անոնց մէջ գլխաւոր տեղ կը գրաւեն խորհրդանշական իրերը, վաւերագրական պատումները եւ արուեստի գործերը: Անոնք ներկայ են Նիւ Եորքի Պատմական Ընկերակցութեան ցուցարահներուն մէջ: Ինչպէս որ «Ընդգրկել փողոցներու եզրին ի յայտ եկած փոքր սրբարաններու յատուկ ցուցահանդէսներ, խորհրդանշական իրեր եւ փուլ եկած աշտարակները պատկերող 15 լուսանկարներ, որոնք

կը պատկանին «Նիւ Եորք Փոսթ» թերթի լուսանկարիչ Տէյվիտ Մարկուէսի:

Սակայն գլխաւոր իրադարձութիւնը երեք ցուցահանդէսներու շարք մըն է, որ վերջ կը գտնէ Նիւ Եորք Քաղաքին կըր մէկ համայնապատկերին ցուցադրութեամբ: Անոնք զգացական եւ տեսողական հայեցակէտերու տպաւորիչ ուղի մը կ'ուրուագեն:

Առաջին ցուցահանդէսը կը կրէ «Ջոյզ աշտարակները յիշելով» վերնագիրը եւ կը պարփակէ Քամիո Ուոսէ վերկարայի բազմաթիւ լուսանկարներէն հաւաքածոյ մը, որ կ'արտացոլէ Աշխարհի Առեւտուրի կեդրոնի շէնքերուն հետ 30 տարուան սիրոյ կապ մը: Վերկար աշտարակներուն գոյութիւնը արձանացած է անոնց շինութեան օրէն մինչեւ կործանումը, զանոնք նկարած է ամէն անկիւնէ, բոլոր եղանակներուն: Անոր լուսանկարները աշտարակները կը փառաբանեն իբրեւ ուժի եւ շքեղութեան կուրծք, որոնք ցուքեր կ'արձակեն արեւուն տակ, եւ Մանհեթենի անցնող նաւերը կը բարեւեն զանոնք:

Սակայն լուսանկարները նաեւ ցոյց կուտան շէնքերուն արտաքին երեւոյթին տարբերութիւնն ու այլազանութիւնը: Ամբողջ զանգուածով գերիշխող կամ հեռու հագիւ տեսանելի աշտարակները մղոնաբար էին ամբողջ շրջանին մէջ: Լուսանկարչական գործիքը վերկարայի հետ էր Սեպտեմբեր 11ին: Ան

հետագային վերադարձած է իր նախասիրած դիտանկիւններէն լուսանկարելու Նիւ Եորքը՝ առանց իր աշտարակներուն: Այս լուսանկարները եւս մաս կը կազմեն ցուցահանդէսին:

Թէեւ տրամաբանութիւնը կ'ըսէ, թէ վերկարայի լուսանկարներուն պէտք է յաջորդեն աշտարակներուն այժմ գետնի հաւասար վայրերուն լուսանկարները, սակայն երկրորդ ցուցահանդէսը կը պատկերէ այն մարդիկը, որոնք գացած են աղէտին վայրը տեսնելու: «Ուրեքանցութիւն» կրտսէս գիրոն դիտելով» վերնագիրով ցուցահանդէսը կը բաղկանայ 30 լուսանկարներէ, զորս Քեւլին Պապրուսքի առած է անցեալ տարուան վերջաւորութեան 5 անգամ Նիւ Եորք այցելելով:

Պապրուսքի սեւ ու ճերմակ լուսանկարները չունին փողոցի լուսանկարչութեան բնորոշ արտայայտութեան եւ շարժումի պարագայանութիւնը: Անոնք լուսարձակի տակ կ'առնեն մարդկային հակազդեցութեան անհաւատալի տարրութիւն մը, որ ո՛չ բռնազբոսիկ է, ոչ ալ ծպտուած:

«Կրտսէս գիրոյն անդին» աղէտին հետեւանքները դարձանող դիագնոստիկ գիտութիւնը» վերնագիրով ցուցահանդէսը կը պարփակէ գունաւոր լուսանկարներու շարք մը:

Շարք էջ 10

«ԱՆԱՐԳԱԿԱՆ» ՔԱՆԴԱԿ ՄԸ ԿԸ ՎԵՐՑՈՒԻ

ՁԱՏԵՐ ԱՆՅԱՐՄԱՐ ՆԿԱՏԱԾ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐ 11Ի ՁՈՇԵՐՈՒՆ ՆՈՒԻՐՈՒՄ ՍԵՐԿ ԿՆՁ ՍԸ ԶԱՆԴԱԿԻՆ ՑՈՒՑԱԿՈՒԹԻՒՆԸ, ՀԱՒԱՆԱԲԱՐ ՈՐՈՒՅՏԵՏԻ ԱՆԿԱ ՍՈՍԿ ՍԵՐԿՈՒԹԻՒՆ ՍԸ ՊԱՏԿԵՐԵԼՈՎ՝ ՁՈՒՐԿ ԵՐ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՍԵՎԱԲԱՍՆՈՒԹԵՆ ԵՒ ԿԸ ՎՐՈՂՎԵՐ ԱՆՅՈՐԴԱՆՈՒԹԻՒՆԸ: ՊԻ. ՊԻ. ՍԻ. ՍԻ. ՄԱՆՄԱՍՆԵ:



«Կարեկցութեան արտայայտութիւն»

Նոր քանդակ մը, որ կը միտէր ոգեկոչել յիշատակը անոնց, որոնք Աշխարհի Առեւտուրի կեդրոնին աշտարակներէն դէպի մահ ցատկեցին, վերցուած է Նիւ Եորքի Ռաքֆելլըր Կեդրոնէն:

«Ներողութիւն կը խնդրենք, եթէ ումանք վրդոված են այս քանդակին ցուցադրութենէն», կ'ըսէ Ռաքֆելլըր Կեդրոնին մէկ բանբերը՝ Սիւզըն Հալփին:

Քանդակը վերցուեցաւ, երբ մարդիկ սկսան դժգոհութիւն յայտնել, թէ անիկա ներողութիւն կը պատճառէ:

Էրիք Ֆիշըլի պրոնզէ «Թամպլինի վումբը» (թաւալող կինը) վերնագիրով քանդակը կը պատկերէ մեկ կին մը, որ շէնքէ մը վար կ'իյնայ: Անոր բացումը կատարուեցաւ Սեպտեմբեր 11ին ետք եւ լուսնով տարակարծութիւններ ստեղծեց:

Երբ դժգոհութեան ալիքը բարձրացաւ, Ռաքֆելլըր Կեդրոնին պատասխանատուները Սեպտեմբեր 18ին պատասառի մը ետին պահեցին քանդակը եւ յաջորդ օր բոլորովին հանեցին զայն:

Ֆիշըլ կը յայտարարէ, թէ իր գործը երբեք չէր միտեր զայրոյթ պատճառել ոեւէ մէկուն:

«Քանդակը մարդկային լիճակի խոցելութեան նկատմամբ կարեկցանքի ամէնէն խոր եւ անկեղծ արտայայտութիւն մըն էր, մասնաւորապէս մարդկութեան ուղղուած», կ'ըսէ ան:

Ծրագրուած էր քանդակը ցուցադրել մինչեւ Սեպտեմբերի վերջը:

